

Մամլո հաղորդագրություն: Նոյ 18, 2016



HAYP Pop Up Gallery
www.haypopup.com
info.hayp@gmail.com
077.177.452/ 099.741.626



«Նոր պատկերասրահներ»

Արվեստագետների կեցության վայր, դասընթաց և ցուցահանդես Գյումրիում Սյուզի Բենքս Բաումի և Հայփի փոփ ափ պատկերասրահի կողմից:

Դասընթացի ամսաթիվ՝ նոյ 5-8, 2016 թ., վայրը՝ «Ապագա տեխնոլոգիաներ» (Գյումրի, Հայաստան)
Ցուցահանդեսի ամսաթիվ՝ նոյ 18-28, 2016 թ., Գյումրի, Հայաստան

Միջոցառումներ՝
Բացման արարողություն ուրբաթ, նոյ. 18, ժամը 19:00 - 22:00 - կենդանի երաժշտություն Բեթ Ուիլյամսի կատարմամբ
Շաբաթ, նոյեմբեր 19, ժամը 16:00 - «Հանդիպում պրն. Ֆրունզիկի հետ նախքան իր ծնունդը»: Վիպասան Վիգեն Բերբերյանը խոսում է գեո ընթացքի մեջ գտնվող «Կառուցվածքը փտած է, ընկեր» վերնագրով համատեղ գրքի հերոսի մասին:
Շաբաթ, նոյեմբեր 19, ժամը 19:00 - Պարային ներկայացում Մարիաննա Պողոսյանի կատարմամբ (Նարեկ բարեգործական հիմնադրամ, Ղորղանյան 83, Գյումրի)
Կիրակի, նոյեմբեր 20, ժամը 17:00 - Հիփ հոփ իմպրովիզացիա “Bogdan Sideshow” և Ինդիթրա Ռեյես-ի կողմից
Շաբաթ, նոյեմբեր 26, ժամը 13:00 - 15:00 - Արվեստագետների հանդիպում: ՀԱՅՓ-ը հրավիրում է արվեստագետներին քննարկելու ապագա ծրագրերը:
Կիրակի, նոյեմբեր 27, ժամը 15:00 - հետազոտող Էրին Փինոնը կխոսի հայկական ձեռագրերով իր աշխատանքների մասին

Ի՞նչ է ՀԱՅՓ Պոփ-ափ Պատկերասրահը

Հայփը շրջիկ պատկերասրահ է, որը կազմակերպում է ժամանակավոր ցուցահանդեսներ այնպիսի չնախատեսված վայրերում, ինչպիսիք են խանութների թափուր նախամուտքերը, վարձակալությամբ տրվող շենքերը և լքված գործարանները: Մենք հույս ունենք ավելի մեծ հնարավորություններ ստեղծել նոր արվեստագետների համար և փոխել տարածքի ու արվեստի արժեքի մասին ընկալումները:

Մամլո հաղորդագրություն: Նոյ 18, 2016

Ո՞վ է Սյուզի Բենքս Բաումը

Արվեստագետ, գրող և ուսուցիչ, ով ստեղծում է ձեռագործ գրքեր: Սյուզի Բաումն առաջին անգամ Հայաստան է այցելել 2016 թ. մարտին, Նեյշնլ Ջեոգրաֆիկի լուսանկարիչ Ջոն Ստենմեյերի և 4Պլյուս լուսանկարչական թիմից՝ Անուշ Բաբաջանյանի և Նազիկ Արմենակյանի հետ: Բաումը «Նոր պատկերագրողուհիներ» նախագծի հեղինակն է, և նրա առանցքային հետաքրքրությունը կին արվեստագետների կարգավիճակը, ստեղծագործական պրակտիկայում հանդիպող դժվարություններն ու մարտահրավերները հասկանալն է:

Ի՞նչ է «Նոր պատկերագրողուհիներ»-ը

«Նոր պատկերագրողուհիներ»-ը Սյուզի Բենքս Բաումի նախագիծն է՝ Հայի փոփ ափ պատկերասրահի հետ համատեղ: Ծրագիրը բաղկացած է երեք փուլից՝ 1. Հետազոտություն / հարցազրույցներ 2. Դասընթաց 3. Ցուցահանդես:

Ծրագրի նպատակն է չորսօրյա ինտենսիվ դասընթացների միջոցով վերակենդանացնել ձեռագործ գրքերի պատմական արվեստը՝ հայ կին արվեստագետների ընտրված խմբին ծանոթացնելով նոր արտահայտչամիջոցների հետ: Ականատես կլինենք ժամանակակից արվեստագետների պատմություններից տպավորված նոր ու հետաքրքրաշարժ աշխատանքի: Դասընթացին կհաջորդի Հայի փոփ ափ պատկերասրահի ներկայացուցիչ Աննա Գարգարյանի կողմից կազմակերպված ցուցահանդեսը՝ առաջարկելով գրքի արվեստի մեջ ներգրավվածության նոր ուղիներ:

Ցուցահանդեսում կներկայացվեն դասընթացի ընթացքում արվեստագետների կողմից ստեղծված աշխատանքները, ինչպես նաև միջազգային ժամանակակից հայ կին արվեստագետներ Դանա Ուայրաֆի (Նյու Յորք, ԱՄՆ), Մարշա Նուրիցա Օդաբաշյանի (Բոստոն, ԱՄՆ) և Նաիրի Խաչատրյանի (Փարիզ, Ֆրանսիա) աշխատանքները: Ըստ Հայի փոփ ափ պատկերասրահի ձևաչափի՝ ցուցահանդեսի

ողջ ընթացքում կլինի «Իրադարձությունների շաբաթ», ինչը նախատեսում է տարբեր քննարկումներ, շնորհանդեսներ, ներկայացումներ մշակութային արժեքների պահպանման, կանանց իրավունքների մասին, և մատուցելու գրքի ընկալումը որպես արվեստի տեսակ:

Այս ծրագիրը մասամբ ֆինանսավորվել է արևմտյան Մասաչուսեթս նահանգի Բերքշայրի WAM թատրոնի կողմից: Հետագա ֆինանսավորումը ստացվել է մասնավոր նվիրատվություններից, Յեքմոր Ընտանիք հիմնադրամի, ինչպես նաև Բերքշայրի Մունլայթ Մայլ հիմնադրամի կողմից:

Նվիրատվություն կարելի է կատարել նաև հետևյալ հղումով՝

www.newilluminations.wordpress.com | www.haypopup.com

Նոր պատկերագրողուհիներ 